

իւ -

24

ԼԵՒՈՆ ԽԱՆՉԱԳԵ

ՍԵՒԱՆՈՅ ՈՒԽՏԱՀՈՐՆԵԲԸ

— * * —

(ՑԻՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԱԲԻՇԱՏ ԱՆՑԵԱԼԻՑ)



ՎԱԴԱՐԴԱՊԱՏ

ԱԼՔԵՐՈՎՈՐԾ պատրի Մոբայ Էջմիածնի

1907

891.99

իւ - 27

19 NOV 2011

891.99
4
4-27

4
4-19
DAB
3848

ԵՐԻՆ ԽԱՆՉԱԴԵ

ՍԵՒԱՆԱՑ ՈՒԽՏԱՀՈՐՆԵՐԸ

(ՅԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԱՐԻՒՇԱ ԱՆՑԵԱԼԻՑ)

Վ.Ա.Դ.Ա.Ր.Զ.Ա.Պ.Ա.Տ.
Էլեկտրական Արբայ Էջմիածնի

1907



I.

Փաթոլիկը ոռնում էր:

Սեանայ ծովակը իւր դառնապին մոնշիւնով տռաւ-
ւել ևս զարհուրելի էր դարձնում մի բուռն նաւաս-
տիների դրութիւնը, որոնք տեղական մի հնամաշ
մակով ճիգ ու ջանքեր էին դործ դնում հասնել
կղզու նւիրական ափերին: Սակայն հուժկու քամի-
ների ահեղ հոսանքը մի կատաղի թափով հեռացնում
էր նրանց կղզու ափերից և դէպի «Գիւնէ» կոչւած
եղերքը մղում: Լեզապատառ նաւաստիներից իւրա-
քանչիւրը զբաղւած էր մի-մի դործով, որպէս զի մա-
կոյկը կարողանայ ազատ լողալ և չխորասուզեի ջրերի
անդունզը: Երկուսը փոփոխակի մի դոյլով մակոյկի
միջի ջուրն էին դուրս թափում որը ամեն անդամ
ներս էր վազում: Երբ փրփրադէզ ալիքները մի սոս-
կալի ճիչով զարնւում էին նաւակի տախտակներին ու
թռչում նրա խորքերը: Տիեզերքի զայրոյթը օրհա-
սական էր: Որքան ծովն էր մի խորունկ թափով ալե-
կոծւում և մրրկածուփ կոհակներ առաջ բերում
այնքան նաւաստիների ներքին աշխարհն էր խոռվ
կերպարանք ստանում ու յուսահատութեան երե-
րուժների մատնում այդ գմբաղդներին: Երկուսը ալ-
դէն մի քանի անդամ որձկել էին և սաստիկ զլսա-



4049-84

ցաւից տանջւելով պարկել էին փոքրիկ տախտակների վրայ. դրանք այլես անկարող էին մասնակցել միւսների ճակատագրական աշխատանքներին: Թէև մի քանիսն էլ թիավարում էին, սակայն նրանց այդ քըլտանաթոր չարչարանքը անկարող էր մեղմել քամու ահեղ հոսանքը և մակոյկը գեպի ցանկալի ափը ուղղել: Եատ չէր նաւորդների թիւը՝ ընդամեն տասն հոգի էին, բոլորն էլ նոր-Բայազէտ ամառանոց եկողներից: Այդ փոքրիկ խմբի մէջ աչքի էին ընկնում այն երկուուր, որոնք կիսառուշադնաց դրութեան մէջ պարկել էին տախտակների վրայ և մերթակի յործկում էին: Դրանք ե... քաղաքի գիմնազիօնների բարձր գասարանների սաներիցն էին, որոնց հասակը երկու թէ երեք տարով հաղիւ էր տարբերում միմեանցից. Դըրանցից մէկը ձգնաւորենց Արամայիսն էր, միւսը դրանց դրացիի չքնաղ օրիորդը՝ Զարուհին, որոնք իրանց ծնողների և չորս բարեկամների հետ ուխտ էին գնում Սեան. Ֆնացած երկուուր նաւավարներ էին: Այդ տարբաղջները դուրս էին եկել նոր-Բայազէտից և նորադուզի ափին վաղ առաւօտեան մակոյի նստելով ճանապարհ էին ընկել գեպի հոչակաւոր Սեանայ մենաստանը և, չնայած որ օրը մերձենում էր իր վախճանին, նրանք դեռ հոգետանջ դրութեան մէջ էին ծովի երեսին: Առաւօտեան ծովակը հանդարտ կանգնած էր, որը և գրաւեց նրանց ուշադրութիւնը և նրանք ճանապարհ ընկան. սակայն միջօրէի մօտերքը նա այնպիսի խոռվայոյզ ալեկոծումով տարութերւեց, որ նաւաստիները կորցրեցին իրանց հոգու կորովը, թէև հերոսական գիմնազութեամբ քափ ու

քրտինք էին թափում արգելել մակոյկի ընթացքը գեպի «Գիւնէ», որից այժմ այնքան էլ հեռու չէին: Ինչու էին նրանք այնքան երկնչում ծովակի այդ եղերքից և ձգտում էին, ինչ գնով էլ որ լինի՝ չմօտենալ նրան: Որովհետեւ այդ ափերի բնակիչները թուրքեր էին, որոնք անշուշտ պատառ-պատառ կանէին իրանց հայրենի քաղաքում մի տարւայ ընթացքում մի քանի անգամ ականատես էին եղել թրբական աւան-թալանի, արիւն-արտասուքի, սրի-հրի, որոնք անխնայ գործ էին գնում այդ բարբարոսները իրանց գարեւոր, իրանց բաղդակից «ամօղիների» — հայերի զլիին: Էլ ի՞նչպէս զլանք կուղէին այդպիսի մի վայրում, որպիսին է «Գիւնէ», հեռու կառավարչական հոգացող (sic) հայեացքից և նորից թուրքերի ճանկը ընկնել: Օ՛ այդ միւնյն էր թէ՝ նետւել ծովակի ցուրտ ջրերի զիրկը և յաւիտեան լոել:

— Ի սէր Աստուծոյ, — աղերսում էր մի թախծոտ հայեացքով ձգնաւորենց Արամայիսի մայրը նաւավարներին, — մենք մօտենում ենք այդ աւազակաբնակ ափին, մի խնայէք ձեր ուժերին:

— Խանմ էդ ի՞նչ խօսք է. ինչքան դուք էք վայսենում էդ շներից, էնքան աւելի՝ մենք. չէ՞ որ մենք էլ ձեզ նման հայ ենք. ուրեմն ի՞նչ վիճակի դուք են-թարկւէք, միւնյնը և մեզ է սպասում. բանը Աստուծած է, — պատասխանում էին նաւավարները:

— Ամա՞ն, ձեր չարը տանեմ, յոյսներդ մի կըտրէք Աստուծուց, ապաւինեցէք ս. Սեանը, — աւելի ևս թախսանձում էր Զարուհիի մայրը:

—ԱՇ կնիկ, ի՞նչ անեն էդ խեղճերը. քամինքանի գնում, սաստկանում է, —նկատեց իր ամուսնուն Զարուհիի հայրը:

—ԱՇիս, անիծւի էդ քամին:

Սակայն այդպէս չեին Արամայիս և Զարուհին. նրանք թէև դժուում էին խիստ եղիելի զրութեան մէջ, բայց նրանց հոգեկան անգորը կացութիւնը նըշամարտում էր նրանց մատաղ գէմքերի վրայ: Նրանք երկուսը միասին էին, թէև շրջապատւած կեանքի այնպիսի դառնագին փոթորիկով, որը կարող էր ճակատագրական վախճան ունենալ թէ իրանց և թէ բոլորի համար: Անգիտակցաբար նրանք բռնել էին միմեանց ձեռքերից և ինքնամուացութեան խոհերով համակւած առես լուելեան խօսում էին իրար հետ: Մերթ-մերթ մի ջերմագին դող էր անցնում երկուսի էլ մարմնով, որը վերջանում էր այն ժամանակ միայն, երբ խիստ ցնցումներ էին դործում նրանց մարմնի այս ու այն մասերը:

Սիրող հոգիները ու շագնացութեան ժամերին էլ գտնում են միմեանց, խօսում են միմեանց հետ, հասկանում են միմեանց:

Եւ այդ ժամերը երջանիկ ժամեր են նրանց համար:

—Ո՛վ ս. Սևան, զու խղճաս մեր եղնիկներին, մեր ջահիլներին, —երկշոտ ձայնով մրմնջում էին Արամայիսի և Զարուհիի մայրերը:

—ԱՇ տնաշէններ, Աստուած ողորմած է. մի յուսահատւէք, —վրաբերեց Արամայիսի հայրը, —դուք լեղապատառ կանէք ձեր երեխաներին:

—ԱՇիս, ի՞նչ անեմ այ մարդ:

—ԱՇ կնիկ մի լար, ապաւինիր էս ս. Սևանը, թէ արժանի ենք, կվրկի մեզ, թէ չէ իրա թող սուրբ կամքը օրհնւած լինի:

Մինչ այս, մինչ այն մակոյկը զգալի չափով հետզետէ մերձենում էր «Գիւնէ» կոչւած ափին:

Յանկարծ Արամայիսը զլուխը բարձրացրեց և չեռւից նշմարելով այդ ցամաքը մի ուրախ ճիչ արձակեց: Նա չէր իմանում թէ ինչ ցամաքի են մօտենում իրանք:

—Հայրիկ, հրէն ցամաքը երեսում է, —նկատեց նա հօրը:

Հայրը ոչինչ չխօսեց:

Զարուհին առնելով նրա ձայնը, նոյնպէս զլուխը բարձրացրեց. դրանց սրտախառնութիւնը անցել էր:

—Զարուհի ջան, դու էլ վերկացար, —հարցրեց Արամայիսը:

—Զայնդ առայ, վերկացայ:

—Ի՞նչպէս է, ի՞մ սիրոդ չի խառնում:

—Ո՛չ:

—Դէհ, փառք Աստուծոյ, իմս էլ չի խառնում: Մենք մօտենում ենք ափին, ամեն ինչ մոռանանք: Արի երգենք:

—Է՛հ:

—Ջան, իմ քէֆս, չգիտեմ ինչու, զալիս է, երբ վտանգը իր ահռելի գոյներով մեր առաջին է կանգնած: Ես կեանք, այ, հէնց էդպիսի կեանքին կասեմ ուր մարդս եփւում է և մարդ է դառնում: Զէ, ջանմի արժի երգել, և նա սկսեց.

«Երբ ալեկոծ ծովի վրայ
իմ մակոյկս խորտակւի,
Ես փրփրագէզ ալեաց մէջին
Դարձալ յոյս չեմ կարի»

Որոտաց ափից հրացանը և վըզզլ շիկացած կապարը անցաւ մակոյկի վրայով: Նաւաստիները խառնւեցին և չէին իմանում՝ ինչ անէին. հեռանալ ափից անկարող էին՝ հակառակ քամին դեռ փչում էր, թէ ոչ իր նախկին կատաղութեամբ: Առաջից՝ կարկտի պէս զնդակ էր թափւում մակոյկի վրայ: Բոլորն էլ կորցրել էին իրանց հոգեկան կորովը, և ընդհանուր աղմուկը, ճիշ ու աղաղակը, գոռում-զոշումը խլացրեց փոթորկի ոռնոցը և ողբացող ալիքների վայ-վույը: Զարուհին այլես անկարող էր նոյն իսկ նստել նա դարձեալ պարկեց, սակայն այս անգամ մակոյկի յատակին: Արամայիսը աճապարեց նրա մօտ ցատկել և նրա զլուխը զրկելով, ինքն էլ պարկեց: Երկու թիավարները դեռ իրանց տեղերումն էին. բայց նրանց ճիգ ու ջանքերը ապարդիւն էին: Արամայիսի երգից իմանալով, որ եկողները հայեր են, ցամաքին խոնւած թրքական խուժանը այս անգամ սկսեց համազարկեր տալ: Հէնց առաջի համազարկին երկու թիավարներ և Զարուհի հայրը վայր ընկան անշնչացած: Այս բանը աւելի ևս զլուխ կորցրած դրութեան մէջ դրեց մնացածներին, որոնք չկարողացան նոյն իսկ հաշւի առնել թէ անհրաժեշտ է մեկնել մակոյկի յատակին:

Որոտաց երկրորդ համազարկը. այս անգամ ըս-

պանւեցին Արամայիսի ծնողները և Զարուհի մայրը. միւսին՝ սպանւեցին դարձեալ երեք հոգի բարեկամներից. իսկ նրա յաջորդին՝ վերջին բարեկամը: Բարեբազգաբար, մակոյկը զարնւեց ստորերկրեայ մի ժայռի և կանգնեց: Զնայած այս բանին մինչև ուշ գիշերին թուրքերը շարունակեցին կրակել մակոյկի վրայ, որի միակ կենդանի արարածները, Արամայիս և Զարուհին, դեռ անշարժ պարկած էին յատակին ամեն բան ճակատագրին թողնելով:

Թանձր խաւարը ծածկեց ամեն ինչ և դարձեալ մակոյկը կորաւ մթութեան մէջ աւազակների աչքերից: Բարեբազգաբար, այդ բարբարոսները լող տալ չգիտեին և եթէ գիտենային էլ սիրտ չէին անիլ մօտենալ մակոյկին, երկնչելով որ նրա վրայ կենդանի մնացածներ կլինեն, որոնք և վրէժինդիր կլինեն: Բացի այդ նաւակը դեռ բաւականին հեռու էր ափից. ծովափին պատրաստ նաւակ չկար, որ նրանք սրանով մօտենային նրանց ուշ ու միտք զրաւող մակոյկին. գտնելով այսպիսի անել դրութեան մէջ, նրանք վըճռեցին մինչև առաւօտ սպասել և վերջացնել իրանց դործը այդ չարաճճի մակոյկի հետ, մանաւանդ, որ քամին իսպառ կտրւեց. հետեւապէս մակոյկը անշարժ կմնար կանգնած մինչև առաւօտ: Եւ այսպէս, նրանք մտան ծովեզերքի մացառների մէջ և քնեցին: Սակայն լուսաբացին նրանք ոչինչ չտեսան ծովակի երեսին. յաջող հիւսիսից հարաւ վչող քամին տաշեղի նման քշել անհետացրել էր նրանց հայեացքից այդ չարաշուք մակոյկը. այդ պատճառով նրանք զլիսիկոր վերագարձան տուն. իսկ նաւակը շնորհիւ այդ

յաջող քամու հոսանքին հետեւալ երեկոյեան կանգանեց երանոս դիւղի «Դիւփ-դար» կոչւած ափին:

II.

Երանոսը իր բնակիչների անվեհերութեամբ նորբայադէտի գաւառոի աչքի ընկնող գիւղերից մէկն է. այդ իսկ պատճառով նա տեղազիների կողմից վաստակել է «Պատիկ Սասուն» մականունը: Այդ զիւղը մեր պատմագրերում յայտնի է. «Մեծ Զագ» անունով Գիւղի արևելեան կողմից մի ընդարձակ փառահեղութեամբ սփռւած է Աւանայ ծովակը, իսկ արևմտեան կողմից՝ Առլը Յովհաննէսի ըլլակը, որի գագաթին կանգնած է նոյն անունով մտտուալ: Մեր նկարագրած ժամանակներում երանոսում իր անսահման հարստութեամբ հռչակ էր ստացել Մահտեսի Աւագը, որը ամեն օր վաղ առաւօտեան գալիս էր Առլը Յովհաննէսի մատուռը աղօթելու, թէև վերելքը դէպի մատուռը այնքան էլ դիւրին չէր նրա համար, սակայն նա այդ սովորութիւնը անաղարտ էր պահել իր կեանքում:

Եւ այսպէս, իւրաքանչիւր առաւօտ Մահտեսին աղօթում էր այդ մատուռում, ապա նստում նրանից փոքր ինչ հեռու, մի առանձնակի ախորժակով ծխում իր երկարավիղ «զէյլանը» ու երկար-երկար մելամաղձոտ յոյզերով լցւած՝ զիտում Գեղամայ ծովակը: Մատուռի շրջակայքից դէպի ծովակը բացւում էր մի սքանչելի տեսարան, որով ամեն անգամ զւարճաւ-

նում էր Մահտեսին և իր ծանր ու սրտամաշ խոհերով սաւառնում դէպի վերը, դէպի հեռուն Նա բնութեան սիրահար էր

Այսպիսի պարագաներում միշտ անցեալի նւիրական պատկերներն են շարան-շարան գալիս ու անցկենում մարդու երեակայութեան մէջ և այդ պատկերները աւելի քան յնցող ու յուզիչ են, երբ երազողը ծանօթ է իր պատմութեան, իր դժբաղդ աղջի անցեալի հետ:

Եւ Մահտեսին գիտէր իր տարաբաղդ աղջի ողբերգական պատմութիւնը: Գիտէր և այսպիսի հոգետանջ ժամերում բաղդատել այդ անցեալը մեր ներկայի հետ ու յուսահատ մնչիւններով կրկնել: «մէկ է, մէկ, այդ սեաբաղդ աղջի վիճակը թէ անցեալում և թէ այժմ»:

Առւտ չէր ասում տառապոյ ծերուկը. Հայոց աղջի պատմութիւնը մի դիւթիչ գաւազանի անողորմ հարւածներով պարբերաբար կրկնւում է: Ատկայն չնայած բաղդի անողոք այդ փորձութեանը հայ աղջը լինքնուրոյն անտարբերութեամբ միշտ ու միշտ անփոյթ աչքերով է զիտել իր ապագան և անկարող է եղել կեանքի մեծ գասեր առնել իր ցաւոտ պատմութիւնից:

Այդ գիշերը Մահտեսին գրեթէ չքնեց և լուսաբացից առաջ, երբ դուրսը մութն էր, երբ արարաշ-խարհը հանգալաւ մշշում էր, նա հագնեց ու դուրս եկաւ տանից: Աղօթարանը դեռ նոր էր շառագունել: Նա լուելեան երկու անգամ խաչակնքեց երեսը, ինչ որ աղօթք մռմռաց ու բռնելով մատուռի ճանապարհը շարունակեց իր վերելքը:

Աշա՛նա հասաւ, ահա մի քանի քայլ էր մնացել, որ նա մտնէր մատուռը, որի դուռը կրնկի վրայ բաց էր. սակայն նա յանկարծ դիւահար եղածի նըման մի քանի անորոշ ցնցումներ անելով յետ ու յետ թռաւ և հազիւհազ կարողացաւ մի կերպ պազել գետնի վրայ:

Ի՞նչն էր այդպէս շանթահար դրութեան մէջ դրել նրան: Մատուռի նեքսե լուսաւորւած էր, և ինչ որ խուլ Հեծեծանքի ձայներ էին լսում այնտեղից, որը խորթ էր Մահտեսու համար. քանի ժամանակ էր, ինչ նա այցելում էր այդ սրբավայրը, սակայն այդպիսի բան երբէք չէր տեսեր: Իր նստած տեղից փոքր ինչ յետոյ նա ուզեց իր խոռված հայեացքը գէպի մատուռը, ուր խունկ ու մոմից սեացած փոքրիկ խաչքարի առաջ ծունկ էին չոքել երկու մատաղահաս հոգիներ, որոնց զգեստների փառունակ տեսքը իրանց տէրերի հոգետառապ կացութեանը հետ ասես վկայում էին, որ զրանք երկնային ողբացող մարմիններ են, որոնք դիշերւայ այդ պահուն, հեռու մարդկային հետաքրքիր ու լպիրշ հայեացքներից, սզում էին իրանց ծով վիշտը:

Խաչքարից կպցրած մոմը անվրդով պլառում էր և իր տրտմազին և աղօտ ճառագայթներով լուսաւորում էր մատուռի նեքսել: Զարմանքից Մահտեսին ողջ քար էր կտրել և խորին զգուշութեամբ ձրգտում էր աննշմարելի մնալ անծանօթներից ու հետազոտել ամեն ինչ:

Միամիտ անհատները այսպիսի երկոյթները յաճախ վերագրում են գերբնական ոյժերի: Այդպիսի-

ներից էր և Մահտեսին: Այս բանը առաւել ևս բոլոր բոքեց Մահտեսու հետաքրքրութիւնը, և նա զլուխը փոքր ինչ բարձրացրեց, որպէս զի լաւ տեսնի թէ՝ էլ փոքր ինչ բարձրացրեց, որպէս զի լաւ տեսնի թէ՝ ինչ կայ մատուռի մէջ: Բայց յանկարծ նա լեղապատառ եղածի նման զարձեալ նստեց իր նախկին տեսքում: չոքածներից մէկը այնպէս դառն հառաչեց, որ նրա ահեղ ձայնը իր ցաւոտ ելեէջներով թնդացրեց այդ անդորր միջավայրը: Նրա լացի ձայնը այնպիսի հոգետանջ հեք, այնպիսի խորունկ մաղձ ու վիշտ էր պարունակում իր մէջ, որ լսողի սիրտն ու հոգին տակն ու վրայ էր անում և երերում նրա ողջ էռւթիւնը: Մահտեսին սարսեց ամբողջ մարմնով, և երկշոտութիւնը իր գժգոյն գոյներով նշմարւեց նրա գէմքի վրայ: Այս գրութիւնը երկար շտեեց. հառաչող պատանին սկսեց աւելի և աւելի լսելի հեկեկալ: Նրա ձայնը մերթ ընդհատում էր, մերթ մի հուժկութաշայնը մերթ ընդհատում էր, մերթ մի հուժկութաշայնը գուշում այնպիսի դառնութեամբ, որ փով գուշում էր թոշում այնպիսի դառնութեամբ: ակամայից ինքդ էլ բոնկւում էիր ալեկոծութեամբ:

Այսպէս էր և Մահտեսին, որը այժմ բառ առ բառ լսում էր նրան:

«Տէր իմ! Տէր, ինչու խնայեցիր մեզ, ինչու այնքան սիրելիների հետ մեզ էլ յաւիտենականութեան տարտարոսը չնետեցիր: Իւշու դեռ այս վերան աշխարհի բաղդ ու երջանկութիւնը չճաշակած՝ մեզ էլ խմացրեցիր նրա թոյն ու դառնութիւնը: Ինչու քռվշտի սե կնիքը զրեցիր մեր անարատ, մեր հպարտ ճակատներին» Նրա ձայնը երերւեց և կորաւ մատուռի միջավայրում: Ապա փոքր ինչ յետոյ դարձեալ լսելի եղաւ նա, «Հաղար ու մի բոցավառ տենակառաներին».

շանքներով գեռ երէկ էր՝ մակոյկ նստեցինք և ձըդւտում էինք մեր ըղձալից համբոյրը տալ քո սրբավայրիդ՝ Աւանայ նւիրական հողերին. բայց, աւաղ, անարժան մահով կորան բոլորը զեռ կիսաճանապարհին իրանց վառ փափազը սրտումը խեղդելով։ Հայրենի հինաւուրց այդ սրբավայրերը զրկւած իրանց վաղեմի շուրջ ու զարդից միշտ բարկութեան կնճիռաներով էին ծածկել իրանց երեսները և այդ իրանց զայրոյթի թոյնը ո՞հ, թափեցին մեզ վրայ ... Այո, արժանի էինք։ Մենք անհարազատ զաւակներ ենք այդ եղկելի սրբավայրերի. մենք միայն կեանքի առօրեայ ուխտերով էինք զիմում գէպի այդ շքազուրկ վայրերը, մենք միայն մեր ցուցամոլ «Եսի» ուխտերով էինք համափւած, ուստի և կրեցինք մեր արժանի պատիժը»

Մահտեսին ոտքից ցգլուխ լսելիք էր դարձել։

«Մեր կեանքի շառագունած առաւօտին մեր երիտասարդ աչքերը կուրացել էին, անկարող էին նշմարել այն ծով ցաւ ու դարդը, որը ողողել է արար-աշխարհը անմեղների լերդացած արիւնով։ մեր մատաղ ականջները հասակի այդ եռուն պահուն անփոյթ էին գէպի այն խլացուցիչ ողբ ու աղաղակը, որոնք ահաբեկում էին ողջ աշխարհը իրանց անմեղ, իրանց դատապարտւած սուդ ու շիւանով։ Ո՞հ, այդ բազդազուրկի, այդ դատապարտւած անմեղների հառաջանքը անկարող եղաւ շարժել մեր ներքին, մեր սեփական «Եսերի» խոկումներով մոռացւած գթասրտութիւնը։ Այո, արժանի էինք. մենք ապրում էինք միայն ու միայն մեզ համար, կորանք և միայն մեզ

համար, Ընդհանուրի ցաւը մերը չէր արժանի էինք» ...

Մահտեսին տակաւ առ տակաւ զլսի էր ընկնում որ իր տեսած ու լսածը իրականութիւն է, և այդ տառապողը դժուում է սթափւած դրութեան մէջ։

Զայնը դարձեալ շարունակեց, սակայն այս անգամ նրա մէջ լսում էր հաստատամութեան այն անխորտակելի ելեւէջը, որը յատուկ է անվեհեր հոգիներին։

«Զարուհի, իմ կեանք, իմ արե, մենք մինչեւ օրս միայն մեր խանգավառ զգացմունքներով էինք շնչել, մենք մինչեւ օրս անկարող ենք եղել զիտել մեր արիւնաներկ շրջապատը և մեր երջանկութեան նաւի վրայ շատ հեռու էինք գնացել։ Այո, շատ հեռու էինք գնացել՝ մենք կեանքի միայն մէկ երեսն էինք նշմարել, իսկ միւսը, աւսպ, ոչ։ Այն երեսը, որ մինչեւ օրս զիտել էինք, մեր սեփականն է եղել, իսկ միւսը՝ ոչ։ Նա ընդհանուրին է, սակայն այդտեղ ենք և մենք. բայց, տարաբազզաբար, մինչեւ օրս անկարող ենք երայց, տարաբազզաբար, մինչեւ զիտել էլեւ զիտակցել այդ։ Եւ մեր սեփական անբաղդութիւնը բաց արեց մեր հոգու աչքերը, և մենք այժմ տեսնում ենք այդ կեանքը իր սոսկ, իր իսկական կերպարանքով։ Մենք մինչեւ օրս այդ կեանքի խորթ զաւակներն ենք եղել։ Արի, սիրելիս, ուխտենք այս սրբավայրում մինչեւ մեր վախճանը հարազատ զաւակներ լինելու այդ գերազոյն կեանքի։

— Ուխտենք, Արամայիս ջան, — հազիւ-հազ մըր-մնջաց միւսը, որից յետոյ Արամայիսը շարունակեց։

Ողբացողները մեզ ծանօթ ուխտաւորներից փըլւ
կւած Արամայիս և Զարուհին էին:

«Ուխտում եմ Հայրենի այս մոռացւած սուրբ
շիրիմով՝ երբէք երբէք մոռացութեան չտալ կեանքի
այն խորախորհուրդ գաղտնիքը, որը այսօր պարզւեց
մեզ համար: Ուխտում եմ մեր Հարազատների դեռ
երեկ թափւած անմեղ արիւնով՝ յաւէտ վրէժինզիր
լինել այդ անմեղ արիւնների համար և երբէք-երբէք
չթափել անմեղների արիւնը: Ուխտում եմ ցաւա-
տանջ Հայաստանի անձնւէր և աւանդապահ հերոս-
ներով՝ երբէք-երբէք չխլացնել այդ տարաբաղդ երկրի
նոյնքան տարաբաղդ զաւակների օրհասական ճիշն ու
աղաղակը և անձնազոհ ջատագովութեամբ որբել ըն-
կածի, թոյլի, անարգւածի արիւն-արտասուքը և կա-
տարել այն ամէնը, ինչ պահանջում է գերադոյն
կեանքը իր վեհ, իր սրբաղան կոչումով: Ուխտում
եմ Հայրենի շքազուրկ արև-լուսինով, երկինք-դե-
տինով, աստեղ-աստղունքով, ծով ու ցամաքով, չու-
րանալ այն ամէնը, ինչ սուրբ է անհատի, հարազատի,
երկրի և գաւանանքի համար»:

— Ես էլ ուխտում եմ քեզ հետ, Արամայիս
ջան, — մռմռաց Զարուհին:

— Ես էլ — լսւեց մի երերւող ձայն, որի տէրը մի
երկու ոստիւնով արդէն մատուռումն էր:

Դա Մահտեսին էր:

III.

Դեռ մութը նոր էր ծածկել ողջ աշխարհը, երբ
Արամայիսը և Զարուհին հասան «Դիւի-դար» կոչւած
ափը: Հեռւից նրանց ուշագրութիւնը զբաւեցին երա-
նոսի վառւող ճրագները և շների ազիողորմ հաջոցը:
Սակայն այդ գժբաղդ թափառականները ենթազրե-
լով, որ դա կարող է թրքական գիւղ լինել հետեւա-
պէս և իրանց կորուստը անխոռւսափելի կլինի, վճռե-
ցին թողնել մակոյկը ճակատագրական կամքին և դաշ-
տեր ու ձորեր ընկնելով բարձրանալ լեռներ ու պա-
տսպարւել մինչև առաւօտ, երբ կարող կլինեն ստու-
գել թէ՝ ուր են իրանք: Եւ այդպէս, նրանք հասել
էին Ս. Յովհաննէսի մատուռը, ուր և մենք տեսանք
նրանց, ուր և պատահեց նրանց Մահտեսին, որը
առնելով այդ տարաբաղդներին իր հետ վերադար-
ձաւ իրանց տունը:

Տեսնելով այդ անձանօթ երիտասարդներին գիւղի
բազմութիւնը շրջապատեց նրանց և հարցերի մի հե-
ղեղ էր, որ թափում էր Մահտեսու զլիսին: Վերջինս
մի կերպ գոհացում էր տալիս հետաքրքրւող բազմու-
թեան: Բայց տեսնելով, որ պոկ չեն գալիս իրանցից,
հրաւիրեց նրանց պատւաւորներին իր սենեակը:

Բազմելով իր տեղում և տեղաւորելով իր շուրջը
իր հիւրերին, նա գիւղերին յատուկ անկեղծ քաղա-
քավարութեամբ նկատեց:

— Բարով էք եկեր իմ թաղայ, իմ ազիղ հիւ-



4049-84

լեր, ես պատահմամբ դույ ձեղ, եթէ ՞չ, խեղճեր,
ով գիտէ, ինչ էր լինելու ձեր վերջը:

— Շնորհակալ ենք, Մահտեսի, — մի թախծալից
ձայնով վրաբերեցին Արամայիս և Զարուհին, որից
յետոյ Մահտեսին շարունակեց:

— Ես երկար-երկար մարտաղ մոտած կառւի նման
տնտղում էի ձեղ և լսում էի ձեր դարդ ու ցաւը:

— Փառք Արարչին, Մահտեսի, որ ձեզ պատա-
հեցինք:

— Այո, փառք Նրան, որ այսօր ձեր շնորհիւ
բաց արեց իմ հոգու աչքերը. այո, ճիշտ է, կայ մի
ուրիշ աւելի երջանիկ կեանք, որը վարագուրած էր
և ինձ համար: Ես լսեցի ձեր հոգեբուզիս ուխտը և
ես էլ ուխտեցի ձեզ հետ. բայց այդ ուխտը իրագոր-
ծելու համար նիւթական միջոցներ են հարկաւոր:
Ես, սիրելիք, ունիմ անսահման հարստութիւն, որը
զոհում եմ այդ ուխտի իրագործման համար:

— Շնորհակալ ենք, բարի Մահտեսի:

— Որպէս զի մենք կարողանանք հասնել մեր նպա-
տակին և բուժել մեր մերձաւորի վերքերը, ցաւերը,
մեզ բացի մեր անձնաւորութիւնից անհրաժեշտ են
և նիւթական միջոցներ:

— Գուք երեքովդ քիչ էք, Մահտեսի. նկատեցին
ներկայ եղողներից մի քանիսը:

— Լաւ լինէնք, քիչ չենք, ինձ Մահտեսի Աւագ
կասեն:

— Լաւ էլ լինէք, դարձեալ չեք կարող այն անել
ինչ կանէ մի խումբ ձեղ նման անձնաղոհներ, — ասաց
նստողներից մի խոժոռ դէմքով երիտասարդ:

— Դրուստ ես ասում Համօ, որ չկան, ի՞նչ կա-
րող եմ անել. ինչ որ ինձանից էր կախւած, սիրելիս,
ես արեցի, ես անցայ իմ կայք-կարողութիւնից:

— Մահտեսի, սխալ ես, հիմի էնպէսի ժամանակ
է, որ շատ կան և կինեն ցանկացողներ, մի կոտրի
մեր գիւղի անունը. հինգ մէկ ես, ես էլ միանում եմ
ձեզ սրտով ու հոգով և կաշխատեմ օգտակար ան-
դամ՝ լինել ձեզ ձեր ապագայ գործունէութեան համար:

— Այնք էլ—ձայն տւեցին քսանից աւելի երիւ-
տասարդներ. էլ ի՞նչ օրւայ համար ենք ծնւել, երբ
անօրէնները կորում են մեր անմեղ ուխտաւորների
ճանապարհներն էր տօ' աղբէր, էսպէս ապրել չի լինի,
մինչև գիւղին դժոխք շհանց չտաս, արքայութիւն չի
ճանչնայ:

— Կեցցէք դուք, բալաներս, — մի զւարթ ձայնով
ասաց Մահտեսին, — ձեզ բոլորիդ համար ձիեր և զէն-
քեր հոգալ ու ճարել իմ քաղցր պարտականու-
թիւնն է:

— Շնորհակալ եմ ձեղանից, — մրմնջաց Արա-
մայիսը:

— Ի՞նչ շնորհակալութեան բան կայ, ինչ որ մենք
անում ենք, մեզ համար ենք անում, մենք վաղուց
մտաղիր էինք, բայց սկսող, պատճառ դարձող չկար.
Հիմի, հօ' փառք Աստուծոյ, դուք եղաք պատճառ:
Մեր նամուսը մեռած չէ զեռ, չէ որ մեր լուսահոգի
նախնիքը ասել են. «նամուսը քցել են շան առաջ,
շունն էլ չի կերել», էլ ուր մնաց մենք, — վրաբերեց
Համօն:

— Դրուստ է, զրուստ է, — ձայն տւեցին երիւ-
տասարդները:

— Հիմի, որդիք, լսէք ինձ, ձեր Մահտեսուն, էս-
մեր թանկագին հիւրերը ուղում են Դիւի-դար ան-
ցնել և հողին յանձնել իրանց ծնողներին, սիրելի-
ներին:

Զարուհին մի դառն «ալ» քաշեց, և երկու կառ-
թիւ խոշոր արցունքներ ցայտեցին նրա սեռակ աչ-
քերից ու ընկան գետին:

— Մենք տեղեկացել ենք այդ անբաղդութեան-
մասին:

— Որ տեղեկացել էք, թող ձեզանից մի քանիսը
դուրս ելնեն, մեր սայլերը լծեն, մինչև մենք փոքր
ինչ նախաճաշիկ կանենք, որից յետոյ բոլորս միասին
կգնանք Դիւի-դար: Եթե մեր բաղդը կտրեց և մա-
կոյկը այնտեղ գտանք, բոլոր սպանւածներին կբերենք
մեր հանգստարան թաղերու:

— Լաւ, լաւ, — ասացին ու դուրս ելան Մահտե-
սու պատւերը կատարելու:

— Մահտեսի, քիչ առաջ փեսաս եկաւ Դիւի-
դարից և պատմեց, որ էնտեղ մի անձանօթ մակոյէ
կայ կանգնած:

— Առագաստաւո՞ր է, — հարցրեց Արամայիսը:

— Այո՛, ասում էր, առագաստաւոր է և մի քիչ
տեղ էլ պատռւած է:

— Հենց էդ է, — մամուց Զարուհին:

— Դէ՛հ, փառք Աստուծոյ, շտապենք հաց ու-
տենք և ճանապարհ ընկենք, իսկ դու, Համօ ջանր
մի արի, դու կաց էստեղ և ջահիւ-ջուլին հաւա-

քիր շուրջդ ու գերեզմաններ փորել տուր, մինչեւ
մենք կվերադառնանք, — վերջացրեց իր ասելիքը հե-
ղինակաւոր ձայնով Մահտեսին:

— Նատ լսւ, էդ իմ բանն է:

— Ապրիս, որդիս, երանի ամենքն էլ քեղ պէս
լինեն:

— Էլի սկսեցիր համար Մահտեսի:

— Չէ, որդիս, զաթի ես քեղ շատ եմ սիրում:

— Ես էլ քեղ յարգում եմ հօր պէս:

— Ապրիս, որդի, ապրիս:

IV.

Ականայ ծովակի գրեթէ հարաւային ափերին
ընկած է Սօթից գաւառը, որի բնակիչների մեծա-
մասնութիւնը կաղմում են թուրքեր, իսկ մի աննշան
մասը՝ հայեր են: Այս վերջինները սկսած այն չա-
րաշուք օրից, երբ ծագեց թուրք-հայկական ազգա-
կործան ընդհարումը, գտնւում էին մի զարհուրելի
կրակի մէջ. մերթ-մերթ թուրքերը յարձակւում էին
սրանց կամ «եայլաների» վրայ, թալանում տաւար-
ոչնարը, սպանում տէրերին, հրդեհում նրանց շէն-
քերը, կամ իրանց աւագակային խմբերով ահ ու
սարսափի մէջ էին պահում ողջ շըջակայքը: Խղճուկ
կառավարութիւնը միշտ էլ արգարանում էր իր ան-
զօրութեամբ: Հենց այդ էր պատճառը, որ թուրքերի
ոտնձգութիւնները օրէցօր մեծ ծաւալ էին ստանում
և առաւել ես երես տալիս այդ արիւնարբու գաղան-

ն' ըին: Թրքական այս ալան-թալանը մի յարատե կերպարանք էր ստացել և դժոխային կացութեան մէջ զրել այդ գաւառի խաղաղ ազգաբնակութիւնը:

Տեղական բէկերից մի քանիսը ըստ երեսյթին անմասն էին այս խոռվութիւններին, իսկ մեծամասնութիւնը, որոնց թւում իր կատաղի բնաւորութեամբ աչքի էր ընկնում Բ. աղան, միշտ ու միշտ գուրում գուրգուրում էր այս եղբայրասպան արշաւանքը: Բ. աղան և՝ խրախուսում էր այդ աւազակային խմբերին և՝ օգնում նիւթապէս և՝ երբեմ ել իր զիւային ծրագրերով զեկավարում էր զրանց: Եթէ գտնուում էր մի արդարադատ ու անաշառ ձեռք, որը իր հզօր շարժումով ուշքի բերեր Բ. աղային, անշուշտ այդ յարձակումները, եթէ իսպառ չդադարէին, դոնէ ակներեւ չափով կնւազէին: Բայց այդ ձեռքը գեռ չէր ծնւել: Եւ Բ. աղան աւելի և աւելի համարձակ էր դառնում իր գործողութիւնների մէջ: Նա մինչ այն աստիճան խրոխտացաւ, որ վճռեց Բ. զիւզի Դզրարենց Դաւոյի գեղեցկատեսիլ աղջկան, Աօնային էլ առևանդել տալ իր համար: Այդ պատճառով ամէն օր որսի պատրւակով թափառում էր այդ զիւզի մօտերքը, որպէս զի տեսնել կարողանայ իր պաշտած արարածին և հրճւի նրա հրաշագեղ կերպարանքով, որը նրան օրըստօրէ ուշացնոր զրութեան մէջ էր դնում:

Աակայն չպէտք է մոռանալ բնութեան այն անուրանալի փաստը, որ ամէն բան ունի և իր փախճանը. հետեապէս Բ. աղան համոզւած էր, որ մի օր վերջ կտրւի իր այդ ցաւատանջ զրութեանը:

Եւ մի աներեսյթ ձեռք պատրաստում էր այդ վախճանը, որի մասին երազել անգամ անկարող էր թրքական տռփանքով լի ցնորւած այդ աղան:

Ճակատագիրը ստէպ-ստէպ այնպիսի չտեսնւած խաղերով է ձեռք կարկառում իր անպաշտպան, իր թոյլ զոհերին, որ մարդկային վառւած երեակայութիւնն անգամ նախատեսել անկարող է: Թշւառ Սօնայի ծնողները սկսած այն օրից, երբ իմացան, որ թուրք աղան անտարբեր չէ զէպի իրանց աղջիկը, միշտ աղի արցունքներ էին թափում և իրանց ձեռքը պոկ չէին տալիս Աստուծոյ փէշից:

— Այ կնիկ, մի դարդ արա՛ ձեռք մի քաշա Աստուծու փէշից, ապաւինիր անմեղների պաշտպան կապոյտ երկինքը, — յաճախ սիրտ էր տալիս ամուսնուն Դաւոն:

— Եհ, մարդ, մեռանք յուսալով, եարա՛ր, Աստուծած կինայի մեր խեղճուկ բալային, թէ չէ մեր լուս հաւատը կմատնի էդ անօրէնների ձեռքը:

— Կնիկ, ամօթ ա, էդքան թերահաւատ մի եղիր:

— Մարդ, չեմ իմանում ինչե՞ր ես խօսում: Էն որ աչքերովս տեսնում եմ ու ականջներով լսում մնում եմ քարացած, զիտեմ դու զեռ հաւատում ես, որ մենք թագաւորի «ռեաթ» ենք, որ նա մեզ կպաշտպանի ու զրա համար էլ մեծ-մեծ բրդում ես: Գիտեմ: էդ ես մտածում համար էդ սխալ ա: Դրանից վատ բաներ են կատարել, և մեղաւորները, երբ թուրքեր են, աղատ համարձակ պտտում են: Դիւան-գատաստան չկայ:

— Եհ, ի՞նչ կարող ենք անել, ջանմ:

— Բակի, քու փափախը տուր ես դնեմ գլխիս,
քեզ ասեմ թէ՝ ի՞նչ կարող ենք անել. ի՞նչ ա, սեղա-
լած, կարծում ես, էն շուն աղան էգուց որ մօտ
գայ իմ բալիս, ես ձեռքերս ծալած լաց կլինեմ ու
թամաշայ կանեմ թէ նա ինչպէս է տանում իմ
զաւակիս, հա՞:

— Ի՞նչ կանես:

— Ի՞նչ կանեմ ... ատաֆներովս ծւիկ-ծւիկ կա-
նեմ նրան:

Տիրող ապօրինի գործերը այնքան էին մեռցրել
հայ կնոջ մէջ այն ջերմ հաւատը, որը նա երբեմն
տածում էր գէպի իր կառավարութիւնը, որ այժմ
նա ատելութեամբ և նողկանքի յոյզերով էր երեր-
ում, երբ յիշում էր այդ կառավարութիւնը իր
բոնած անարդ և յանցագործ ուղիով։ Այժմ նա
յոյսը միայն ու միայն իր տառապած ոյժի վրայ էր
դրել. պէտք էր բորբոքել նրան, այդ կանացի ինքնօդ-
նութեան անարգւած հաւատը։ Մտածում էին ար-
դէօք մեր ազգային ջոջերը այդ մասին։ Եթէ մտա-
ծէին, մենք այժմ այսպիսի դժբաղդ իրականութեան
առաջ կանգնած չկինք լինի։ Սակայն չպէտք է յու-
սահատութեամբ լցւած՝ ձեռքեր և ոտքեր ծալել ու
նստել։ Լաւ է ուշ, քան երբէք։

— Ինիկ, բարիքեալլայ, թուրքի որի առաջ ատամ-
ներով ես գուրս դալիս։

— Էգուկս լաւ է, քան քեզ պէս. քեօու իրատ-
ներ տալ կնկան, գոնէ ես կենդանի չեմ մնայ ու
թշւառութիւնս աչքերով չեմ տեսնի։

— Դէ՛չ, լաւ, լաւ մութն ա, ել երդիսը կալնիր,

քնենք, դու դոչախ ես, համա ինչ էլ լինիս, մի մո-
ռացիր, որ կնիկ ես, կնիկ։

— Սեգալած, դու էլ զիտես, թէ դու մարդ ես,
փափախ ես դնում, հա՞:

— Իու բերնովն եմ դնում, հա՞:

Յանկարծ հազիւ լսելի ձայնով սկսեցին դուռը
թակել։ Մի խուլ իրարանցում ընկաւ տան մէջ. մարդը
ու կինը մնացին շիւարած և իրար երեսի էին նա-
յում։ Սօնան քնած էր։

— Կնիկ, մէ տես, էն ո՞վ է։

— Ի՞նձ ես հրամայում հա՞ — ասաց զայրացած
ձայնով կինը ու դունը մօտեցաւ։ «Ո՞վ էք», — հար-
ցրեց նա։

— Մեանայ ուխտաւոր ենք, վայոց ձորից ենք
գալիս, — պատասխանեց ձայնը դրսից։

Հայկական աղատ հնչիւնը պարզ համոզեց կը-
նողը, որ խօսովը հայ է. նա դուռը բաց արեց։

Քսանից աւել զինւած հայեր, որոնց միայն ար-
տաքին տեսքը ահ ու սարսափ էր սփոռում իր շուրջը,
նեքսե մտան. դրանց առաջից գնում էին երկու գե-
ղեցկատեսիլ երիտասարդներ, որոնք և կարգադրում
էին խմբին։

Դաւօն զարհուրեց, բայց ինքն իրան սիրտ տւեց,
չէ՞ որ բոլորն էլ հայեր էին, այդ պատճառով վստահ
ձայնով հրաւիրեց նստել։

— Զէ, բիձա, մենք ձիեր ունենք, տեղ ունես
նրանց համար, թէ՞ ոչ։

— Կայ, կայ, ձեր ջանին մատաղ, իմ աղիզ Սե-
անայ ուխտաւորներ, հայի անապատի ջերմ երկր-

պատուներ, ձեր արել երկար լինի, ձեր մուրազը կատարւած լինի,—արտասուբը աչքերին նկատեց Դաւոյի կինը:

Չիերը տեղաւորելուց յետոյ, նրանք բոլորն էլ շարւեցին թռնրի կողքին և սկսեցին զրոյց անել Դաւոյի և նրա կնոջ հետ:

—Բիձար, ուր է քո աղջիկը,—հարցրեց եկողների երիտասարդ զլխաւորը:

Դժբաղդ ամուսինները ողջ քար կտրեցին և միաբերան հարցրեցին.—Ի՞նչ աղջիկ:

—Չեր աղջիկը, Սօնան, —նկատեց միւս երիտասարդը:

—Վայ, անունն էլ զիտեն, —վախեցած ամուսինները փսփսացին:

—Այո, անունն էլ զիտենք, բոլոր տառապողտանջւողների ցուցակը մեղ մօտ է. կան մարդիկ, որոնք յայտնում են մեզ ամեն բանը:

—Հրես կողքիդ քնած է—միմնջաց Դաւոյի կինը:

—Դէ՛չ, փառք Աստուծոյ, չենք ուշացել:

—Վայ, ի՞նչ էք անելու, —զալիացած ձայնով հարցրեց Դաւոն, որը դառնալով դէպի կինը՝ փսփսացնրա ականջին. «Դէ՛չ, ատամներովդ ծւիկ-ծւիկ արս, տեսնեմ»:

—Բան չենք անելու, մենք զիտենք Բ. աղայի զիտաւորութիւնը, նա այսօր կամ վազը պիտի թըռցնէր ձեր զաւակին, ուստի և աճապարել ենք օդնելու ձեզ:

—Փառք քեզ, անահուն Աստուծած, —միարերան ճշացին ամուսինները:

—Երբ և իցէ դուք տեսնում էք այդ աղային, —հարցրեց դարձեալ երիտասարդը:

—Ինչպէս չէ, նա ամէն օր որսի է գալիս մեր մօտելքը:

—Լաւ, վազը, երբ նա գալու կինի, իսկոյն մեզ տեղեկութիւն տւեք, իսկ այժմ մենք յոգնած ենք, պիտի քնենք:

—Բա՛, հաց չեք ուտելու, —վրաբերեց տանտիկինը:

—Ո՛չ, մենք կերել ենք:

—Զէ, Արամայիս, ես վազուց կաթ չեմ խմել եթէ կաթ լինի, ուրախութեամբ կվայելեմ մի բաժակ, —ասաց միւս զեղեցկատեսիլ երիտասարդը, որի թախծոտ աչքերը սէր և վստահութիւն էին սփռում իրանց շուրջը:

—Լաւ, լաւ, Զարուհի ջան, կհարցնեմ, —փռափսաց նրան Արամայիսը:

—Լամթ էք ուզում հա՛, —հարցրեց Սօնայի մայրը:

—Այո, —պատասխանեց Արամայիսը:

—Էս բոպէիս, —ասաց նա և երկու բաժակ կաթ բերեց նրանց համար:

Կաթը խմելուց յետոյ բոլորն էլ պարկեցին քնելու:

Երկու երիտասարդները առանց հանւելու. նոյնպէս քնեցին: Նրանք բռնած ունէին միմեանց ձեռքերից, և այս բանը դարձել էր նրանց համար սովորութիւն: Այդպէս էին նրանք հանդիպել իրանց զըժբաղդութեանը:

Դրանք մեզ ծանօթ Արամայիս և Զարուհին էին, միայն ծպտեալ կերպով: Այն հոգերուղին ուխտը, որին ականատես եղաւ Մահտեսին, այժմ զրանք

իրագործում էին: Այդ գաւառի նոյն իսկ ամենախուլ ու յետ ընկած վայրերն էլ նրանք մարդիկ էին պատրաստել, որոնք և հաղորդում էին այդ անձնւեր զոյգին ամէն բանը և որոնք իրանց համամիտ ընկերների հետ յաւետ օգնութեան ձեռք էին կարկառում անձարներին, խեղճերին և գիտէին շարաչար պատժել յանցաւորներին.

Հենց այդ էր պատճառը, որ նրանք Դաւոյենց տունն էին եկել:

V.

Արշալոյսը զեռ նոր-նոր էր սկսել շառագունիր գեռ նոր էր Սևանայ ծովակը զարթնել իր գիշեռային մրափից և խուլ հառաջանքներ արձակելով առես ճիշգեր էր թափում ոտքի կանգնացնելու թմրած բնութիւնը, երբ Դպրաբենց Դաւօն դուրս սողաց իր խըրճիթից դէպի իրանց գիւղի տափարակը, ուր որսի պատրւակով օր ու գիշեր թափառում էր Բ., աղան: Հասնելով այնտեղ, նա կուչ եկաւ մի թփի տակ և սկսեց զւարճանալ վաղորդեան բնութեան այն չքնաղ հրաշալիքներով, որոնք զաղտնիք են մնում շատ-շատերի համար և որոնց հմայիչ տեսքը վայելելու երջանկութիւնը շատ քիչ անհատների է վիճակում: Դեռ Բ. աղան չէր եկել, որ նա այդ մասին կարողանար իսկոյն և թ հաղորդել իր գիշերային այցելուներին, այդ պատճառով նա պպզած թփի տակին հրապուրւում էր Սօթից գաւառի արշալոյսով: Որքա՞ն

բաղդ, որքա՞ն երջանկութիւն է, երբ մարդը թափանցում է բնութեան գեղեցկութեան մէջը:

Եւ Դաւօն այդ երջանիկների շարքումն էր այդ օրը: Ահա Գիւնէի շարան-շարան լեռնալանջերի վրայ թառած գորշագոյն ամպերի քուլաները սկսեցին օրօրւեր դէպի վերը բարձրանալ: Օ, ի՞նչ ալեկոծութիւն էր յառաջ եկել այնտեղ: Ահա հառաջող ծովակի յուշ շիկիւռը իր նազելի վազքով ընդհատեց նրանց ընթացքը և նրանք խառն ի խուռն իրարանցումով մերթ այս կողմ մերթ այն կողմ ոլացան հազար ու մի ահռելի կերպարանք առնելով: Մէկ էլ տեսնում էիր հսկայական ուղտերի վրայ բաղմած քաջարի սուրհանդակներ էին, որ տնկտնկացնելով իրանց այդ ինքնուրոյն զրաստները, վազում էին դէպ առաջ: Մէկ էլ յանկարծ հալւում էր այդ բաղմութիւնը, և քո առաջ ցցւում էր վիշապների մի շտեսնւած վոհմակ, որը ծանր ու բարակ շարժումներով դէպի երկինքն էր քաշուում: Դաւօն փշաքաղւում էր, նա նոյն իսկ մոռացաւ թէ՝ ինչի համար դաշտ է իջել օրւայ այդ պահուն: Եւ Սևանայ հովասուն այդ թրթռուն գեփիւռը ինչեր ասես, որ չէր ձեակերպում իր քաղցրաշունչ հոսանքով և գարբնում խեղճուկ Դաւոյին իր տեղում: Մէկ էլ ողջ այդ ամպային աշխարհը կարմրեց և բոցակէղ ճաճանչներով վառեց ամբողջ արեւելքը, ուր ամեն ինչ հրաբորքոք թեւերով սկսեց հազար ու մի ոստիւններ արձակել ու պարել: Ծովակն էլ անմասն չմնաց, նա կրակի համայն այդ լեռները առ սես կլանեց և ինքն էլ թւում էր այրւել սկսեց: Այդ իսկ պահուն ծովակի երփներանդ Մջա-

կայքը սկսեց մի խառնիճաղանձ ձայնով աղմկւել. այս-
տեղ քոսոտ արտուտիկն էր թրփրտայնում իր թե-
ւերը և իր դեռ քնաթաթախ երգով մասնակցում
բնութեան այդ համերգին. այնտեղ լերան մշուշից
քաղցած բազէն էր ձայնակցում նրան. մի ուրիշ տեղ
աներես ձնձղուկներն էին ծլուում և աւելի ես տղե-
ղացնում չարահոգի ագուաւների կոկոցը, իսկ այս
ու այն անկիւններից բիւրաւոր կով ու հորթերը
իրանց անձունի բառաչովը որոշակի վկայում էին, որ
իրանց տէրերն էլ ոտքի են կանդնել: Մի խօսքով, Բա-
բելոնեան կատարեալ խառնաշփոթութեան էր նման
այդ օրւայ առաւօտք: Բնութիւնը տակաւին չէր իր
ներդաշնակ ձեռքը այդ բոլորի վրայ սկսել:

Այսպէս է յարատե կեանքի սկիզբը, նա զուրկ է
ներդաշնակութեան կատարելագործութիւնից,

Այս ընդհանուր խառնաշփոթութեան մէջ միայն
ծովակն էր իր համաչափ ալիքներով զարնւում ափե-
րին, մի արտամաշ մղկտում: Հեծեծում և իր դառ-
նաշունչ վայ-վույով խեղդում իր աղմկւող շրջա-
կայքը: Նա էր, որ տարերային մեծ գաղտնիքը ընդ-
դրկելով իր ցուրտ օրերում անսասան հետեւողու-
թեամբ կատարում էր նրա խորախորհուրդ պահանջը:
Նա էր, որ իր բիւրաւոր ջրային մասնիկներին համե-
րաշխ օդակներով անխցիի միաւորութեան կատարե-
լագործութեան հասցրել և մի ամբողջութիւն կազմե-
լով իր թեւերի վրայ առած տարերային գերագոյն
գաղտնիքը դարեր շարունակ անքակտելի ներդաշնա-
կութիւն էր ստեղծել: Եւ եղկելի այդ գեղջուկը՝ բը-
նութեան այդ զաւակը, այնպէս էր տարւ եր ինքնա-

մոռացութեան մէջ ընկել, որ անկարող էր նոյն իսկ
նշմարել թէ՝ արեւ արդէն դուրս է եկել: Եւ այդ
թշւառ Դաւոն թերեւս երկար այդ զրութեան մէջ
մնար, եթէ Բ. աղան չնկատէր նրան ու նրա կողմը
չընթանար:

— Բարի առաւօտ, Դաւո քիրվայ, — կեղծութեան
ժպիտը երեսին՝ ձայն տւեց նրան Բ. աղան:

Դաւոն շշմեց. նա յանկարծակիի եկաւ և հա-
զիւ կարողացաւ կմկմալ.

— Ասու բարին, Բ. աղա:

— Դաւո քիրվայ, Խէ՞ր է օրւայ այս պահուն.
Շինի՞ գու էլ իմ պէս որսի սիրահար ես դարձել:

— Ո՞չ կովս եմ եկել փնտուելու, աղա, ես ուր,
որսը ուր, կովս կորել է, փնտուում եմ յոգնեցի,
նստեցի, որ փոքր ինչ հանգստանամ:

— Է՛՛հ, դու էլ, օրհնած, բանի համար ես քունդ
կտրել. ամի մի կովի համար անհանդիստ լինել:

— Ինչո՞ւ չամի, աղա, քո որսից հօ լաւ կլինի:

— Իմ որսից, — մոմուց աղան ու նստեց նրա
կողքին. — Խեղճ ողորմելի, իմ որսը միլիօններ ամի
իմ համար, դու զիտե՞ս Բ. աղան այնքան անխելք
է, որ բան ու գործ թողած՝ օր ու գիշեր որսի քա-
մակիցն ընկնի, հա՞:

— Բա ի՞նչ:

— Զէ, սիրելիս, սիսալ ես:

— Ի՞նչ կայ որ, աղա:

— Ա՛խ, Դաւո քիրվայ, որ էնպէս է պատահել,
ես պիտի իմ գարդը քեզ բաց անեմ:

Դաւոն իրան բանից բէխաբարի տեղ դրեց ու
վրաբերեց.

—Աղա, վստահ եղէք իմ վրայ:

—Յիշում ես անցեալ տարւայ քո «Եայլայ» գը-
նալը, յիշում ես, երբ ես պատահեցի քեզ:

—Ի՞նչպէս չէ:

—Այ, հէնց էդ օրւանից ես դադւել եմ և որսի
պատրւակով ամեն օր շըջում եմ այս տեղեր, որ մէկ
էլ տեսնեմ քո թառլան Սօնային, որի համար պատ-
րաստ եմ զոհելու ամէն բան. երանի՛ այն օրը ես
չպատահէի քեզ և չտեսնէի քո այն մարալ աղջկան:

—Աղա, իմ աղջիկը այնքան էլ գեղեցիկ չէ:

—Օ, ինչե՞ր ես դուրս տալիս, ես երդւում եմ
Օմարի զլխով, նրան պաշտում եմ, պաշտում, բայց
թարսի պէս նա մեր դնից չէ:

—Ի հարկէ քո դնից չէ, և քո այդ մտքերը
անիրադորձելի են. ոչ իմ աղջիկը քեզ առնող է և
ոչ էլ մեր հայերը թողնող են նրան:

—Ես գիտեմ էդ այդ պատճառով ես ձեր դիւ-
զերն էլ էն օրին կդնեմ; ինչ օրի դրեցին մերոնք մեր
հարեան գաւառները, այն ժամանակ Սօնան յաւի-
տեան իմը կլինի, յաւիտեան

—Էդ լաւ միտք չէ, աղա, ձեռք վերցրու էդ
մոքերից և քո անձնական վայելքների համար մի
զինիր իրար դէմ մեր դարաւոր հարեաններին. չէ
որ մենք էլ մարդ ենք, որ դանակը ոսկոռին հաստ,
պիտի ձեր սրի դէմ սուր պարզենք. — ասաց ու
կանգնեց:

— «Մարդ ենք», — հեգնական ժպիտով մրթմը-
թաց աղան:

—Դու աւ արա, աղա, ես գնում եմ:

—Դաւո, եթէ քո կամքովն աղջիկդ բերես էս-
տեղ ու ինձ տաս, գուցէ ալան-թալան գործ չդնեմ
ձեր զիւղերում:

—Տեսնենք, աղա, կմոածենք, — ասաց ու գնաց.
Հարկաւոր էր Արամայիսին տեղեկութիւն տալ Բ. ա-
ղայի գալստեան մասին, որի համար և նա զաշտ էր
իջել:

Դաւօյի գնալուց անցել էր երկու ժամ սակայն
Բ. աղան նստած էր գարձեալ իր տեղում և խորա-
սուզւել էր մտատանջութեան մէջ ու ծրագիրներ էր
պատրաստում իր ապագայ դործունէութեան համար:

Նա իրան երջանիկներից երջանիկ էր կարծում
և, արդէն Սօնային տիրացած համարելով, իր երջան-
կութեան նաւի վրայ հեռու, շատ հեռու էր գնացել:
Մէկ էլ ձիան ոտքերի տրոփիւններ լսեց և անփոյթ
անտարբերութեամբ զլուխը բարձրացրեց և մնաց տեղն
ու տեղ քարացած. քսանից աւելի զինւած հայեր
շըջապատեցին նրան: Նա իր աչքերին չէր հաւատում,
նա զեռ ևս չէր հաւատում իր լսածներին, որ հա-
յերը, իրանց խաղաղ, խեղճ, թմրած հարեանները
ընդունակ են զէնք կրելու, ուստի և աներկիւդ թա-
փառում էր այդ վայրերում:

Մինչ նա ուզեց ոտքի թռչել լսւեց խմբի երի-
տասարդ զլխաւորի խրոխտ հրամանը. «Եթէ չես ու-
զում սպանւել, մի՛ շարժւիր»:

Նա հնազանգւեց նրա հրամանին, և մինչդեռ

Հաշիւ ու համար էր տալիս իրան՝ թէ ի՞նչ է կատար-
ւում իր հետ, խմբի մարդիկներից մի քանիսը բռնե-
ցին նրան և կապեցին ձեռքերը:

—Տես, անիրաւ, այժմ գու իմ ճանկերումն ես
և պէտք է ստանաս քո արժանի պատիմը: Տեսնում
ես այս սպառազինւած տղաներին, որոնց նման տաս-
նեակ հազարներ կան, որոնք անմեղների դատը պաշտ-
պանելու տենչանքով են դործի այս ասպարէզը իջել:
Ուր անմեղների, անձարների դատը ոտնակոխ է լի-
նում, սրանք առանց ազգի խորութեան աճապարում
են այնտեղ և անձնազոհ ջատագովութեամբ փրկու-
թեան ձեռք են կարկառում այդ տարաբաղդներին:
Լսում ես, —նկատեց նրան զլիսաւորը:

—Լսում եմ բայց ես ի՞նչ կապ ունեմ այդ ան-
մեղների և նրանց դատի հետ. ես մինչեւ օրս նրանց
ոչ լւախին եմ խառնւել և ոչ վատին: Նրանք իրանց
համար, ես ինձ համար:

—Ընդհակառակը, գու կապ ունես և աւելի քան
խոշոր կապ: Ի՞նչ է, ողորմելի, քեզ թւում է, որ
մենք տեղեկութիւն չունինք թէ՝ ի՞նչ երազներով ես
գու շոյում քո վայրագ, քո մոլեզին խոհերը: Մենք
գիտենք ամէն ինչ և այսօր առանց յապազելու այս-
տեղ ենք իջել վախճան տալու քեզ և քո ոտնձգու-
թիւններին: Դու քո խոլամական տռփանքով լի խան-
դավառ կրքերին յագուրդ տալու խոկումներով բռնկ-
ւած՝ երազում ես մի շարք թշւառ գիւղեր արեան
մէջ ողողելու, որով և պիտի տիրանաս այն արարա-
ծին, որը նողկանքի անհուն դառնութեամբ ատումէ
քեզ և քո բռնած ընթացքը: Ահա թէ ի՞նչ:

Բո աղան զլիսի ընկաւ թէ՝ ի՞նչ տիպի մարդկանց
ծուղակն է ընկել ինքը, այդ պատճառով սիրահար-
ներին յատուկ վառւած ոճով թախանձել սկսեց:

—Տէր իմ նոր եմ զլիսի ընկնում թէ՝ ում հետ
գործ ունեմ: Զեր ասածները բոլորը ճիշտ են, սակայն
գիտցէք, ի՞նչն է մղում ինձ դէպի այդ սև եղեռնա-
գործութիւնը, —խելացնորութիւնը: Այս, խելացնո-
րութիւնը: Սկսեալ այն չարաբաստիկ օրից, երբ ես
գժրաղդաբար, թէ բարեբաղդաբար, տեսայ այն հրեշ-
տականման արարածին, Սօնային, լռեցին իմ մէջ
մարդկային ամեն վեհ նւիրական ձգտումները, և ես
իմ սեփական խոցերով դաղւելով՝ մոռացայ մարդկա-
յին սրբազան պարտականութիւններս դէպի մեղ տի-
րող շրջապատը և խաւարային չարագաւ ոգիների
գարշ մտքերով լցւած՝ վճռեցի, ինչ զնով էլ որ լինի,
տիրանամ այդ չնաշխարհիկ արարածին: Եւ որպէս զի
այդ բոլորը չլինի, որպէս զի անմեղների արդար արիւնը
չողոզի մեր հողը, խղճացէք ինձ և թողէք, որ ես տի-
րանամ նրան: Զկայ այս վերան աշխարհում ինձ
համար կեանք, երջանկութիւն առանց նրան: Թող
ծփան շուրջս աշխարհային փառք ու պճրանքը, թող
համատարած թեերով բուրէ շուրջս արար-աշխարհի
վայելքները և իրանց այդ գերազոյն բուրմունքով ար-
բացնէ ինձ, այն ժամանակ էլ դարձեալ այս ուրախ
ու զւարթ արել սև կինի ինձ համար, երբ Սօնան
հեռու կինի ինձանից: Ի՞նչն է թուրքին ստիպելու
արիւն թափելու, —այս և սրա նման իղձերը: Մէկին՝
թալանի տեղն է մղում այդ դիւային ասպարէզը,
միւսին՝ աղգային կոյր թշնամանանքը, իսկ ինձ նման-

Ներին՝ ո՛չ, մեր անիրաւ բաղզը: Եթէ ես չտեսնէի՛ Սօնային, գուցէ երբէք էլ չխախտէի ազգերի համեռ բաշխութեան որբազան ուխտը: Եւ այդ բոլոր անիւրաւութիւններին դեկավարում է կառավարութեան մի գաղտնի մատը:

— Դու, իրօք, խղճալու արժանի ես, եթէ միայն այդ է քեզ զրդել խախտելու մեր դարաւոր դրացիաւկան համերաշխութեան աւանդը: Սակայն ուշքի եկը որ տիրող այս պարագաներում քո այդ փափազը իրագործել անկարելի է, մանաւանդ, որ Աօնան քեզ ատում է: Ահա թէ ի՞նչն է զիսաւորը: Թո՞ղ այդ թշւառ աղջկայ սիրտը անտարբեր չլինէր դէպի քեզ: Ես ինքու կկատարէի ձեր իդձը: Բայց, երբ նրա սըրտում չկայ նոյն իսկ մի աննշան անկիւն, մի թեթև խորշ ուր գու տեղ բոնած լինէիր, էլ ի՞նչ օրէնքով դու կամ ես պիտի աշխատենք կապել նրա ինեղճուկը նրա անպաշտպան կեանքը ձերի հետ: Վեհանձն եղէք, Բ. աղա:

Բ. աղան ասես մեղմացաւ փոքր ի՞նչ և քիչ էր մնացել ձեռք վերցնէր իր պաշտած մտքերից. սակայն այդ ըսպէին Սօնայի լուսատիպ կերպարանքը պատկերացաւ նրա երեակայութեան մէջ և նորից յուզեց նրա հոգեկան աշխարհը. նա դարձեալ իր նախկին վայրագ մտքերը շոյել սկսեց:

— Տէր իմ տեսնում եմ առանց Աօնայի ապօղը չեմ:

— Է՞լի, Բ. աղա, զժւեցիր, ինայի՛ր քեզ, ինայի՛ր մեր տանջւած գեղջուկներին: Եթէ ո՛չ, գու կենդանի չես գնալու այստեղից:

— Զահրամ թէ չեմ գնալու:

Վայրկենաբար երիտասարդ գլխաւորը վայր ցատկեց չիուց և մերկացրած դաշոյնը ձեռքին մօտեցաւ նրան: Երիտասարդի կատաղի դէմքը և մերկացրած դաշոյնի շլացուցիչ տեսքը փոքր ի՞նչ ուշքի բերին կալանաւորին, սակայն նա լուս մնաց: Այդ ժամանակ երիտասարդը բոնեց նրա զլուխը, բարձրացրեց դէպի վեր, որպէս զի կոկորդը լաւ նշմարել կարողանայ, և դաշոյնը դրեց նրա վրայ: Մի թեթև շարժումն և կաշին կարւեց ու կարմիր հեղուկը վագեց այնտեղից: Մի ըսպէ ես, բայց յանկարծ կալանաւորը ճշաց մի այնպիսի աղիողորմ ձայնով, որ երիտասարդը ցնցւեց:

— Ինայի՛ր ինձ:

Երիտասարդը ձեռքը բարձրացրեց: Եւ թշւառ Բ. աղան շարունակեց նոյն ձայնով: — Ինայի՛ր յանուն քո պաշտած անմեղների ցաւատանջ դատի: Ես ուխտում եմ հէնց այս օրւանից կամակից լինել քեզ և շնչել ու տպլել քեզ հետ: Եւ որպէս զի անկեղծութիւնը անխղելի լինի մեր մէջ, ես քեզ առաջարկում եմ քո ընկերներովդ այսօր ի՞նչ միտսին հանգիստ առնեք իմ յարկի տակին: Ես քեզ շատ գաղտնիքներ բաց կանեմ: այս, ես քեզ ցոյց կտամ այն աւագակներին, որոնց արիւնուշտ զաղանութիւններին զոհ գնացին ձեր ծնողները ու բարեկամները: Այս, ցոյց կտամ: Ես վաղուց զիտեմ թէ ո՞վ ես գու: Ես Աօնայի համար ուզում էի հազարաւոր զոհ հեր բերել. ի՞նքս նոյն իսկ քիչ մնաց զոհւէի, սակայն երբ նա արհամարհում է այդ բոլորը չկայ նա այլեւս

ինձ համար: Ես հաւատում եմ քեզ կարիք չկայ
ատուգելու, որ նա ատում է ինձ:

Արամայիսը ուրախացած համբուրեց նրան և
արձակելով ու յանձնելով Բ. աղային իր դէնքերը
նրա հետ իր ընկերներով ճանապարհ ընկաւ նրա տունը:

VII.

Արևելցիներին յատուկ սրտագին հիւրասիրուա-
թեամբ ողջ օրը Արամայիսը անցկացրեց իր ընկերու-
ների հետ Բ. աղայի յարկի աակին: Վերջինս իւրա-
յիններով այնպէս ընդունեց Արամայիսին և նրա ըն-
կերներին և այնպիսի սրտաբուղն անկեղծութիւն
ցոյց տւեց դէպի նրանց, որ Արամայիսը իր ողջ կեան-
քում անկարող էր մոռացութեան տալ այդ օրը: Բ.
աղան նոյն իսկ բացատրեց նրանց թէ՝ ով է զինել իւ-
րայիններին իրանց դարաւոր դրացիների գէմ և թւեց
այն չարագործների անունները ու բնակչութեան վայ-
րերը, որոնք այնպէս եղերական մահով սպանեցին
Արամայիսի ծնողներին և բարեկամներին:

Դրանից էլ աւելի գիւտ անկարող էր սպասել
Արամայիսը: Նա այժմ ճանաչում էր իր թշնամինե-
րին և վրէժինդրութեան անհուն դառնութեամբ
լցւած՝ ծրագիրներ էր պատրաստում ըստ արժանոյն
պատժելու այդ եղեռնագործներին: Եւ այսպէս ծա-
նըր-ծանը խոհերով երերւելով նա երեկոյեան պա-
հուն տւեց իր հրաժեշտը Բ. աղային, որին այդ օր-
ւանից իր բարեկամն էր համարում և ճանապարհ

ընկաւ դէպի Գիւնէ կոչւած ափը ի կատար ածելու
իր վրէժինդրութեան անխորտակելի ծրագիրը:

Ընկերները լուռ ու մունջ հետեւում էին իրանց
գլխաւորին և չին համարձակւում խանդարել դուրս
բերել նրան իր մտազբաղ դրութիւնից: Միայն Մահ-
տեսին էր, որը իր տարիքին համեմատ ունէր և
կեանքի դառն փորձառութիւն ու լաւ գիտէր թէ՝
ուր և ինչու համար է աճապարում Արամայիսը դէպի
Գիւնէ: Նա երկար չափեց ու ձեւց և վերջապէս
վճռեց միջամտել:

— Արամայիս, — մեղմ ձայնով նկատեց նայ — ես
քաջ գիտեմ թէ՝ ինչն է քեզ այդպէս ցաւատանջ
կացութեան մէջ դրել և ինչի համար դու առանց
յապաղելու աճապարում ես դէպի Գիւնէ:

— Մահտեսի, շատ ուրախ եմ որ դու այդպէս
խորաթափանց տեղեկութիւն ունես: — Հազիւ մըու-
մուաց Արամայիսը նրան:

— Սիրելիս, մեզ ի՞նչ օգուտ իմ խորաթափանց
տեսութիւնից, ես էլ այն ժամանակ գոհ կինէի քե-
զանից, երբ դու կինայէիր այս ալեոր վարսերիս և
այդպէս շուտափոյթ, առանց ծանր ու բարակ կշռե-
լու չիր ձեռնամուխ լինի այս գժւարին քայլին:
ես զիտեմ ձերայինների թափւած արգար արիւնը
գոչում է քեզ դէպի վրէժինդրութիւն: Սակայն չը
պէտք է մոռանալ որ հարցը այս ու այն գործի շու-
տափոյթ ձեռնարկութեան մէջ չէ, այլ նրա յաջող
լուծման մէջ: Մենք առանց խորունկ համոզմունքին
որ մեր այս արշաւանքը յաջող ելք կունենայ մեզ
համար, չպիտի երբէք այսպէս թեթևութիկ ձեռվ գործի

կպչենք: Աիրելիս, բաւական չէ, որ մենք զիտենք չառագործների անունները և բնակչութեան վայրերը, այլ անհրաժեշտ է լուրջ ուսումնասիրութեան ենթարկել այդ վայրերի իւրաքանչիւր քար ու թուփը, ծակ ու ծուկը: Առանց կանխապէս այդ իմանալու, սիրոս մի դառն ենթադրութիւններով է երերուում որ մենք յաջողութիւն չենք ունենալու մեր այս ձեռնարկութեան մէջ: Հենց այդ տեսակէտից էլ ես կթախանձէի քիչ լուկ ինձ, վերագառնալ Յ. զիւղի բարեկամներիս մօտ, որոնք լաւ ծանօթ են այդ եղեռնագործների և նրանց զիւղերի հետ, խորհրդակցել նրանց հետ, ապա ըստ այնմ վարւել: Թէ չէ զիւրագրգիռ տագնապներով ղեկավարուել մեզ օգուտ չի բերի:

— Մահտեսի, զարմանում եմ թէ՝ այս ինչ փոքրոգութիւն է համակել քեզ որ զու երկուութեամբ ես վերաբերում գէպի այս ձեռնարկութիւնը, ուր ցասկոտ շեշտերով պատիժ է պահանջում անմեղ թափւած արիւնը: Ես զիտեմ որ առանց նախապէս կշռադատելու եմ կպել այս գործին, բայց և համազւած եմ, որ անմեղ զոհերի նոյնքան անմեղ ուրւականները օր ու զիշեր սաւառնում են իմ զլիսի վերել և պատիժ են շնչում ու խոստանում չարագործներին: Եւ այդպէս, ես վստահութեան խոկումներով լցւած՝ ընտրել եմ հենց այսօր, այս զիշեր արդարագատութեան այդ սուրբ պահանջը իրագործելու: Փոյթ չէ ինձ, թէ ինչ է լինելու սկսածիս վախճանը:

Զարուհին նոր ուշքի եկաւ և մելամազձոտութեամբ ու մի ցաւոտ ձայնով նկատեց նոյնպէս.

— Արամայիս ջան, խելքի եկ, ինչե՞ր ես խօսում գու, չէ որ զու պարտական ես և մի աների մասին խորհելու, այստեղ մենակ զու չես: Լսիր Մահտեսուն, նրա իւրաքանչիւր սպիտակած մաղը կեանքի շատ դասեր է տեսել: Նա փոքրոգի չէ, այլ փորձառութեան չարատանջ բովից անցած մի հսկայ: Բացի այդ, միթէ զու մոռացել ես. չէ որ մեր լուսահոգի նախնիները ասել են, «մեծի լսողի ոտը քարի չի զիպչել»:

— Ես այնքան էլ փոքր չեմ: Զարուհի ջան, ինչպէս ինքդ ես կարծում:

— Փոքր չես, բա՛ ի՞նչ ես: — յուսահատ շեշտով ասաց Մահտեսին: — ի՞նչ բան է 20—23 տարի: Ա՛յս չէ քո մեծութիւնը: Ճիշտ է, զու մեծ ես կրթութեամբ, բայց դասարանական կրթութիւնը պիտի եփւի, պիտի շփւի, պիտի հազար ու մի քամիների հանդիպի առօրեայ կեանքի հոսանքում: Որ կարողանայ զտւել և որոշ աշխարհայեցողութեան հասցնել անհատին: Իո կրթութիւնը տակաւին խելահասութեան որոշ սկզբունքներ չի կրում իր մէջը: Միենոյն կրթութիւնը այս ու այն անհատի համար համաշափ օգուտներ անկարող է տալ: Վերջինս ձեռք է բերում անհատական մանրազնին զիտողութեամբ: Դու, սիրելիս, կեանքի զեռ յոխորտացող այն շրջանումն ես զտնւում: Ուր ոչ այնքան գործ է ստեղծում: Որքան աղմուկ, որքան դատարկ հարայ-հրոց: Տեսնում ես, 60-ին մօտիկ տարիկ ունեմ: սակայն համոզւած եմ: որ յաղթանակը կրթութեանն է պատկանում: Եւ հենց այդ տեսակէտից էլ ես խոնար-

Հում եմ քո առաջ. սակայն դու էլ մի՛ դաւաճանիր իմ այնքան խոր հաւատին և մի՛ քո այդ անխոչեմ ձեռնարկութեամբ համոզիր ինձ, որ դու տակաւին անկարող ես օգտւել ստացածդ կրթութիւնից:

—Մահտեսի, լաւ ես ասում: բայց չ՛ որ կեանքի մէջ կան ըոպէներ, որոնք ժամեր, օրեր, ամիսներ, նոյն իսկ տարիներ արժեն, ես զգում եմ այժմ այդ բոսէի ոյժը և նետում եմ հէնց այսօր ձեռնարկութեանս այս ուղին: Ի՞նչ էլ լինի, փոյթ չէ, այսօր մահանալ, թէ մի քանի տարուց յետոյ, չ՛ որ յանցանքը պատժւած լինի:

—Հէնց այդ է, որ ես տարակոյս եմ: որ գոլծելու այդ եղանակով դժւարին թէ յանցանքը պատժւած լինի:

—Աիր, սիրելիս, ի՞նչպէս կարող է յանցանքը պատժւած լինել, երբ դու գեռ չփիտես թէ՝ ուր է ծածկւած նա: Նախ պէտք է ստուգել թէ՝ շարագործները բոլորն էլ իրանց գիւղումն են. դիտենալուց յետոյ պիտի հետամուտ լինել, որ յանկարծակի բերել նրանց, որը յաճախ մեծ գործ է տեսնում: քան չափւած, ձեւած խոշոր ոյժեր: Դու գնում ես թերես որոշ ծրագրով, բայց չ՛ որ դու առաջի անգամն ես տեսնում այդ վայրերը, ուր ուղում ես յաղթութեամբ պստկել ծրագիրդ: Զէ, սիրելիս, լիր ինձ և վերագրածիր Բ. գիւղ խորհրդակցելու, ինչպէս ասացի: մենք գնում ենք այս չնչին ոյժով գիտես ի՞նչ ահռելի ոյժերի հանդէպ: Ինքդ տսացիր, որ կան ըոպեներ, որոնք ժամեր, տարիներ արժեն: Խորասուզ-

ւիր այդ իմաստուն առաջի թէ՛ մէկ և թէ՛ միւս հակառակ կողմը:

—Իմ վճիռս անքակտելի է, Մահտեսի, —դրական գոյնով նկատեց Արամայիսը:

—Եթէ այդպէս է, իմ վճիռս էլ անքակտելի է, ես անկարող եմ այս դէպքում ընկերակցել ձեզ, ես չեմ ցանկանայ, որ իմ շատ բան տեսած ալեսը վարսերս սեանան աշխարհի առաջ: Մնաք բարեաւ, ես վերադառնում եմ Բ. գիւղը:

—Ես չեմ կարող արգելել քեզ: Տէր ընդ քեզ իսկ ես որոշել եմ և անկարող եմ թողնել: Ես գընում եմ:

—Ա՛խ, քամաշունչ երիտասարդութիւն, —մըռամբաց Մահտեսին և արշաւեց Բ. գիւղը, —այդ էր միթէ քո տւած ուխտի մեծութիւնը:

—Սա էլ ուխտիս մի մասն է, —նկատեց նրան Արամայիսը և շարունակեց իր ճանապարհը:

VII.

Աւանայ լճակի Գիւնէ կոչւած ափի շղթայաձել լեռնալանջերից մէկի կատարին մէն մենակ բազմած է Գ. կիսախարիսուլ վանքը: Վանքի շրջակայքից դէպի ծովակը բացւում է մի աննկարագրելի տեսարան, որի հմայիչ տեսքը վկայում է, որ մեր նախնիքը ունեցել են գեղարւեստական ճաշակ և նրանց սրտին շատ մօտիկ է եղել բնութեան այս ու այն հրաշալիքը: Հէնց այդ է պատճառը, որ այսօր մեր մենաստան-

Ները, վանքերը ու սրբավայրերը մի առանձնակի հոգատարութեամբ կանգնած են այնպիսի վայրերում՝ ուր բորբոքւում է բանաստեղծի ողջ էութիւնը և օր ու գիշեր առանց գագարելու կարող է վազել նրա ցաւոտ գրիչը և մի ինքնուրոյն ոգեսրութեամբ կարող է թւել, նկարագրել քեզ իրան շրջապատած դրախտանման բիւրաւոր տեսարանները։ Չնայած, որ այսօր ճակատագրի մի անոիրտ դաւաճանութեամբ այդ սրբավայրերը զրկւած են իրանց հինաւուրց, իրանց վազեմի շուք ու զարդից, սակայն իրանց այդ մենաւոր թշւառութեան մէջ էլ նրանք մի անխորտակելի, մի անսասան դառնութեամբ վկայում են հայի հոգեկան առանձնայատկութիւնների մասին։ Մանրազնին խորաթափանցութեամբ ու նոյնքան աւելի նուրբ լրջութեամբ հետեւցեք դուք այդ սրբավայրերին, և ձեր առաջ կրացւի հայի ողջ հոգերանութիւնը ու աշխարհահայեացքը։ Եւ այդտեղ դուք մի առանձնակի բաւականութեամբ կտեսնեք հայի ճարտարապետական հանճարը, նրա էստէտիկական նրբութիւնը, նրա վառ երկայնութեան ճշտութիւնը և այն ամէնը, որը վաղուց ի վեր ընդհանրացրել է նա և որը իր անդարձ հոգերով մղում է նրան դէպի կուլտուրայի ցանկալի ուղին։

Չնայած, որ Գեղարքունիք երկրին յատուկ հովասուն արևը բաւականին բարձրացել էր երկնակամարի վրայ և իր բոսորային շողերով լուսաւորել էր այդ երկրի դար ու դաշտը, որոնք իրանց արդ ու զարդով երևան էին եկել և յնծութեան ժպիտը երեսներին իրանց յուշիկ փսփսուկներով քեզ շատ բան

էին ասսւմ. սակայն օրւայ այդ պահուն Գ. վանքի բլրակից գորշագոյն մառախուղը տակաւին չէր անհետացել և իր մերթ սև, մերթ մոխրագոյն շերտերով ծածկել էր վանքի տեսքը հետաքրքիր հայեացքից։ Բայց, եթէ ուշի ուշով դիտելու լինէինք, անշուշտ կտեսնէինք, որ այդ մառախուղ չէր, այլ աւելի շուտ շատրւանի նմանութիւն ունէր, որի ջրի սիւնեակը զգալի բարձրութեան հասնելով, տխուր-տրտում ամպեր կաղմելով, փշրւում էր և ցած, դէպի մօտակայ ձորակը թափւում ու տարածում նրա բազմաթիւ սև ու մութ խորշերում։ Սակայն մի բան ակներե էր, որ այդ կարձեցեալ շատրւանի ուղիղ ստորին մասում մերթակի պլազլում էին խարոյկի հրեղէն լեզուներ, որոնք և իսկոյն մեռնում էին ծուխի թանձրշերում։ Անշուշտ դա ոչ մառախուղ էր, ոչ շատրւան, այլ աւելի շուտ մի խարոյկ, որի ծուխը ծառանում էր դէպի երկինքը, ապա յանկարծ փշրւում էր ու դէպի մերձակայ ձորակը թափւում իր մանրմունը քուլաներով։ Խարոյկի շուրջը շարւած էին մի խումբ սպառազինւած երիտասարգներ, որոնք մի ապշեցուցիչ ախորժակով նախաճաշիկ էին անում։

—Դէ՛չ, տղերը, ձեր հոգուն մատաղ, շուտ աւրէք, մենք ուշանում ենք, —նկատեց ընկերներին նըւրանց գլխաւորը։

—Արամայիս, մենք հինգ րոպէից յետոյ պատրաստ կինենք, բայց հարկաւոր է նախ իմանալ մեզ բոլորիս թէ՝ ինչպէս սկսենք, —մեղմ ձայնով ասաց նրան ընկերներից մեկը։

—Համօ ջան, լաւ ասացիր, հարկաւոր է մեզ.

բոլորիս էլ իմանալ մեր անելիքը, որ գործի եռուն ժամանակին չշփոթւենք:

—Լաւ, լաւ, Արամայիս, բայց հարկաւոր չէ մեզ տեսնել այս մալականների հետ, որոնց գիւղը աշա՞երևում է և այնքան էլ հեռու չէ մեզանից, մանաւանդ, որ ճանապարհը նրա մօտով է անցկենում:

—Դա շատ լաւ կինէր, գուցէ այդ մալականները իրանց խորհուրդներով օգտակար կինեն մեզ:

—Տղէրք, այդ անձանօթ անզգամներին գաղտնիք յայտնիլը աւելի վտանգաւոր չի լինի մեզ համար, —վրաբերեց ընկերներից մի ուրիշը:

—Ո՛չ, մենք ինչ հաշիւ ունենք, որ նրանք վտանգաւոր լինեն մեզ համար, ես ձեր զիստառն եմ, հրամայում եմ գնալ. ձի նստենք, երկաթը տաքտաք կծեծեն:

Խօսողները Մահտեսուց բաժանւած Արամայիսն էր իր ընկերներով, որոնք բոլորն էլ ձի նստեցին և ճանապարհ ընկան դէպի վերև ասւած մալականի գիւղը:

Գիւղի ծայրին, ճանապարհի վրայ գտնւում էր մի խանութ: Տղաները բոլորն էլ իջան խանութի մօտին և նրանցից մի քանիսը Արամայիսի հետ մտան խանութը հանգստանալու:

Խանութպան մալականը աչքերը լայն բաց արած երկար անխօս դիտեց եկողներին և կեղծութեան ժպիտը երեսին հարցրեց.

—Կարելի՞ է արդեօք իմանալ, այդ ուր էք գնում:

—Ինչու չէ, —պատասխանեց Արամայիսը, —մենք գնում ենք այս մօտակայ թուրք գիւղը:

—Երեկի լաւ դաս տալու այդ շներին իրանց անհանդիստ չարութիւնների համար:

—Համարեա թէ, բայց ո՞ր կողմովն է յարմար գիւղին մօտենալու, —հարցրեց Արամայիսը:

—Ի հարկէ ձորի միջով. եթէ սարերի վրայով գնաք, նրանց տաւարածները ձեզ կտեսնեն, —քմծիծաղ տալով ասաց մալականը ու խանութի միջի դըռնով անցաւ իրանց տանը մասը, ինչ որ էր փսփսաց իր եղբօրը, որից յետոյ նա սարերի վրայով բազէի արագութեամբ դէպի թուրք գիւղը ոլացաւ ամէն ինչ հաղորդելու նրանց:

Խանութպանի բացակայութեան ժամանակին Համօն նկատեց.

—Արամայիս, ախր չէ որ ձորակի միջով անցնել լաւ չի լինի մեզ համար, մեզ կարող են շրջապատել:

—Ո՛վ պիտի խապար տանի թուրքերին մեր գալու մասին, չե՞ս տեսնում մարդը խորհուրդ է տալիս ձորով գնալու:

—Նատ էլ, ես զրան էլ այնքան չեմ հաւատում:

—Ի զուր, ի՞նչ ենք արել զրան, որ դաւաճանի մեզ:

—Ոչինչ, բայց լաւ չենք անի, որ զեկավարւում ենք զրա խորհրդով:

—Մենք, երբ դա վերադառնայ, լաւ առետուր կանենք զրանից, զրա սիրտը կշահենք և կդօստացնենք մեզ հետ:

Դեռ խօսը չվերջացրած՝ խանութպանը վերադարձաւ և տղաները սկսեցին առատ առետուր անել զրանից: Վերջինս ուրախացաւ և թւում էր թէ

զղաց իր արածի վրայ. սակայն դաւաճանութիւնը արւած էր և արդէն ուշ էր նրան ուղղելու:

Տղաները ոչինչ չկասկածելով ճանապարհ ընկան ձորի միջով գէպի թուրք գիւղը: Ճանապարհին ոչինչ չէր երեւում: և նրանք անփոյթ անտարբերութեամբ շարունակում էին իրանց ճանապարհը չերեակայելով անդամ, որ իրանք ընկել են թակարդի մէջ: Ուղիղ ճանապարհի կիսին յանկարծ նրանք նկատեցին: որ առաջից երեւում է թուրքերի աշռելի մի բազմութիւն, բոլորն էլ զինւած, բոլորն էլ պատսպարւած իրանց նախօրօք բռնած դիրքերում: Տղաները իսկոյն հասկացան բանը ինչումն է և փորձեցին յետ նահանջել, բայց այստեղ աւելի քար կտրեցին. ետեւց նոյնպէս կտրւած էր ճանապարհը դարձեալ զինւած բաղմաթիւ թուրքերով, որոնք երկու կողմից սկսեցին կարկտի պէս գնդակներ թափել նրանց վրայ:

—Տղայք, մեղ դաւաճանեց մալականը, այլ ևս հնարք չկայ փրկութեան. առաջից ետեւից կտրեցին մեր ճանապարհը, կողքերից պատսնման լեռներն են, ով կարող է, թող մի կերպ մազլցելով հէնց այդտեղերով ազատի իր վլուխը և ուղիղ Գ. վանքը գնայ ու նրա մէջ դիրք բռնի: Եթէ կարողանաք վանքը հասնել դուք փրկւած էք, վանքից բացի ուրիշ դիրք մի բռնեցէք, իսկ ես կկուեմ առաջից և ետքից եկողների հետ և շեմ թողնի, որ այդ շները հալածեն ձեզ,—ձայն տւեց Համօն, որը ճիշտ որ նետւեց մօտակայ ժայռերի խոռոշը և սկսեց կրակել մերթ առաջ, մերթ յետ: Թուրքերից ով յանդգնում էր իր դիրքերից դուրս քար որպէս զի հալածի տղաներին:

արիասիրտ Համօյի անշեղ գնդակը գետին էր գլորում այդպիսիներին: Իսկ տղաները մայրեր կորցրած դառների պէս փուած լեռնալանջերի վրայ շանդուելով և օձային գալարներ գործելով շարունակում էին իրանց գժոխային վերելքը: Ո՛վ հասնում էր լերան կատարին, իրան զցում էր վանքը. վերջապէս, բոլորն էր բացի Համօյից, իմբւեցին վանքում: Թուրքերը տեսնում էին այդ: Յանկարծ նրանց միջից դուրս եկաւ մի մալական և ուղիղ գէպի վանքը ընթացաւ: Մկըրում վանքում եղողները ուղեցին սպանել նրան, բայց տեսնելով որ դրանով աւելի կկատաղեցնեն մալականներին, որոնք կարող կլինեն և միանալ թուրքերի հետ, թողեցին, որ նա գայ, թերեւս մի բան ունի ասելու: Մօտենալով վանքին նա ձայն տւեց.

—Թուրքերը տեսնում են ձեզ, նրանք մտածում են պաշարել վանքը և ձեզ կոտորել: Թէև վանքը լաւ դիրք է, բայց նրանք ուղում են կտրել ձեղ ծովից—ջրից, որից յետոյ ձեր զրութիւնը հասկանալի կը լինի:

—Բա՛ ի՞նչ անենք, որ մեռնել է, թող մեր վանքում մեռնենք, —վրաբերեց Արամայիսը:

Դժբաղները չփատէին, որ վանքի միջից ըստորեկրեայ մի անցք կայ, որը տանում է գէպի ծովը և որից իւրաքանչիւր պաշարումների ժամանակը միաբանները ջուր էին վերցնում ծովից:

—Ի՞նչո՞ւ մեռնեք, զուք ուղիղ ծովի ափը իջէք, ծովի ափին կան բազմաթիւ ժայռեր, որոնց նոյնքան աւելի խոռոշներում այրերում կպատսպարւեք, մինչև գիշերը մենք ձեզ կազատենք:

Վանքում մի խուլ իրարանցում անցաւ, որը սակայն շուտ վերջացաւ, բոլորն էլ վճռեցին հետեւ մալականի խորհրդին: Թշւառները չգիտէին, որ դարձեալ դաւաճանութեան զոհ են զնում: Նրանք դուրս թափւեցին և իջան ծովի ափը, ուր ճիշտ որ կային շատ քարայրեր, որտեղ և պատսպարւեցին նրանք: Հենց որ այս բանը տեսաւ թրքական խուժանը, դիւային քրքիջ արձակելով, հարայ-հրոցով շրջապատեց այդ այրերը և սկսեց վերևից ծառերի չորսուկներ նաւթով փառել և այդպէս զլորել քարայրների բաղմաթիւ բացւածքներից. տղաները շփոթութեան միջոցին անկարող էին եղել նկատել, որ այլերը խոր չէին և ունեն վերևից բազմաթիւ բացւածքներ. բայց եղածն եղած էր: Տղաները փորձում էին հանդցնել թափւած կրակը, բայց երբ մօտենում էին բացւածքների դիմաց, վերևից թուրքերը կրակում էին նրանց վրայ իրանց հրացաններով և կամ նաւթ էին սըրս. Կում խեղճերի վրայ, որից յետոյ նրանք ամբողջովին բռնկում էին բոցերով և անդիտակցարար ծովը նետում իրանց, ուր կամ թուրքի գնդակն էր վերջ տալիս նրանց տարտարոսական տանջանքներին, կամ ջուրն էր խեղճում: Այսպէս, տղաների կէսը զոհ զնաց այդ գաղանների բարբարոսութեանը:

Ամենից աւելի ողբերգական էր Զարուհիի մահը: Նա բռնկւեց բոցերով և դուրս խուսաւ իր թագստավայրից. սակայն ծովը չնետւեց, այլ սկսեց օրհասական ձայնով օդնութիւն գոչել: Այդ իսկ բոպէին Արամայիսը վագրի կատաղութեամբ լցւած՝ նոյնպէս դուրս վաղեց իր որջից և սկսեց ծովից ջուր սրսկել

իր պաշտած արարածի վրայ, որպէս զի մի կերպ հանգցնէ կրակը և մեղմէ իր սիրելիի ցաւատանջ դրութիւնը: Նա մերթ ձեռքերով, մերթ իր գտակով ջուր էր վերցնում ծովից և սրսկում տարաբաղդ աղջկայ վրայ, արհամարհելով թրքական գնդակների վզլոցը, որոնք կարկտի պէս թափւում էին նրա վլրայ: Բայց, աւաղ, յանկարծ դժբաղդ աղջկանից դէպի զանազան կողմեր լուեցին նրա վրայ եղած շարի-շար կապած փամփու շտակալներից պայթած փամփու շտներից այնպիսի մի որոտ, որ ողջ այդ շրջակայքը թնդաց, և թուրքերը քար կտրեցին: Թշւառ զոհը նետւեց դէպի երկինքը, որտեղից ապա քաղցած դագանի նման բերան չուած ծովը ծածկեց մարդկային այդ անիրաւութեան զոհին: Իսկ Արամայիսը վիրաւորւելով ուշագնաց ընկաւ ծովի ափին: Մինչ այս, մինչ այն Բ. գիւղից փոթորկի արագութեամբ դէպի վանքն էին աճապարում հեկ-հեկ սպառազինւած մարդկանց մի ստւար բազմութիւն, որոնց առաջից ինքնիրան մռմռալով, բարկութեան կնճիռները երեսին զնում էր մի միջին տարիքաւոր մարդ, որը որքան մերձենում էր վանքին, այնքան աւելի թախծոտ և զայրոյթով լի տեսաք էր առնում և մռայլւում: Ա. մեծ գործի զլուխ անցած դուք քամաշունչ լակոտներ, գուք անուրանալի ոյժ էք, բայց ոչ զեկավար մարմիններ. ինչ կինէր, ինձ լսէիք, այս էի ես ձեզանից սպառում: — ստէպ-ստէպ մռմռում էր նա և առաջ ընթանում: Վանքից մի փոքր հեռու իմաստալով բանն ինչումն է, նա հրամայեց շրջապատել թուրքերին, իսկ իրայիններից մի քանիսին զրեց ճա-

նապարհների վրայ, որպէս զի մերձակայ գիւղերից
թուրքերը օգնութիւն չստանային, և սկսւեց թուր-
քերի սոսկալի ջարդը: Առաջից ծովս էր արգելու մ-
նրանց փախչել, իսկ յետելից՝ տղաներին Բ. գիւղից
օդնութեան հասած բազմութիւնը: Վերջապէս կեն-
դանի մնացած մի քանի թուրքերը մի կերպ փրկելով
իրանց զլուխները, այս ու այն գաղտագողի անցքե-
րով խուսափեցին մահից և իրանց գիւղը հասան:
Երբ ամեն բանը վերջացաւ, եկողները ծովի ափը
իջան, տղաներից միայն մի քանի հոգի էին կենդան:
մնացել, այն էլ ծանր վիրաւորւած: Միջին տարիքա-
ւոր մարդը գտաւ և Արամայիսին. նա կիսակենդան
ընկած էր, լերգացած արիւնը ծածկել էր նրա գեղե-
ցիկ դէմքը, որից գեռ վազում էր այն: Նա լւաց նրա
վերքերը, կապեց և շատ ուրախացաւ, երբ տեսաւ,
որ վերքերը վտանգաւոր չեն: Ապա հրամայեց, որ
վիրաւորւածներին և սպանւածներին վեր առնեն և
առանց սպասելու վերադառնան Բ. գիւղը, երկնչելով
մի զուցէ իրանք էլ թակարգի մէջ ընկնեն: Երբ պատ-
րաստում էին ճանապարհ ընկնել, Արամայիսը ուշքի
եկաւ, բաց արեց իր պղտոր աչքերը և տեսնելով իր
զլսի վերև կանգնողին, հազիւ լսելի ձայնով շշնչաց.

—Ասա՛, ո՞վ ես, ազաշում եմ: ուր է իմ Զա-
րուհին:

—Մահտեսին եմ: իսկ Զարուհիի մասին կիմա-
նաս յետոյ:

—Ուրեմն նա և դժբաղդ վիրաւորը նորից
ուշաթափւեց:

Մինչ Մահտեսին, որը Բ. գիւղից գիւղացիների

հետ թէե ուշ օգնութեան էր հասել տղաներին, ձբգ-
տում էր ուշքի բերելու Արամայիսին, նրա պարա-
նոցով փարւեց մէկը և ջերմաջերմ համբոյրներ տա-
լով նրան կրկնեց մի քանի անգամ:

—Մահտեսի, այս, յաղթանակը այժմ զգոյշնե-
րին է. անձնու բացութիւնը շրջապատւած է ամեն ու-
րեք դաւաճաններով:

—Ա՛յս, գու կենդանի ես, Համօ ջան,—ասաց
նա,—յուսով եմ: այսուհետեւ Արամայիսը կսթափւի
և խոհուն զգուշութեամբ կիրագործի իր ուխտը:



the following place of which may be described as follows:—A large alluvial deposit of sand and gravel, derived from the adjacent hills, occupies the greater portion of the valley, and extends for about two miles along the river. A few small patches of marshy land are scattered among the gravelly drifts, but the greater portion of the valley is occupied by a flat, level, and well-drained prairie, extending from the base of the hills to the river.

The soil is a dark brown loam, well-drained, and of good quality, but it is not very deep, and the surface is often covered with a thin layer of fine sand.

The vegetation consists of a variety of grasses, including several species of *Agrostis*, *Phragmites*, and *Calystegia*.

The valley is bounded on the west by a range of hills, which rise abruptly from the plain.

The hills are composed of a series of ridges, separated by deep gullies, and are covered with a dense growth of timber, including oaks, hickories, and elms.

The highest point of the range is about 1,000 feet above the level of the valley floor.

The valley floor is about 500 feet above the level of the river, and the river itself is about 100 feet wide at its mouth.

The river flows through the valley, and empties into the Mississippi River at the mouth of the valley.

The valley is about 10 miles long, and about 1 mile wide at its widest part.

The valley is bounded on the east by a range of hills, which rise abruptly from the plain.

The hills are composed of a series of ridges, separated by deep gullies, and are covered with a dense growth of timber, including oaks, hickories, and elms.

The highest point of the range is about 1,000 feet above the level of the valley floor.

The valley floor is about 500 feet above the level of the river, and the river itself is about 100 feet wide at its mouth.

ՀՀ Ազգային գրադարան



NL0340485

34074

